



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԹԻՒ 636

Վիճակիս Հոգեւոր Հովիւներուն

Ուրախութեամբ կը տեղեկացնենք որ ``Աւագ Շարաթ`` գիրքը կարելի եղաւ վերահրատարակութեան համար պատրաստել եւ տպագրել:

Այս հատորը, որ լոյս կը տեսնէ մեկենասութեամբը Տիկին Թագուհի Թամարին՝ ի յիշատակ իր ամուսնոյն Սեթ Թամարին, կը ըստականայ 624 էջերով եւ տրամադրելի պիտի լլլայ Ապրիլ 5էն սկսեալ:

Փափարողները կրնան զիմել Առաջնորդարանի գրատունը: Լաթակազմ այս հատորին գին նշուած է 15.00 տոլար:

Այս առիթը կը փափարինք տեղեկացնել նաեւ որ վերջերս Ս. Վարդան Մատենաշարի որդէս հրատարակութիւն լոյս տեսած են հետեւեալ գիրքերը:

- Առձեռն Ժամագիրք, Լաթակազմ, 15.00 տոլար
- Չեռաց Շարական, Լաթակազմ, 20.00 տոլար

Յիշեալ գիրքերը եւս կարելի է ապսպրել Առաջնորդարանի գրատունէն:

Սիրոյ ողջունել

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Մարտ 25, 1987
Նիւ Եորք, Ն.Ե.



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԹԻՒ 621


Վիճակիս Հոգեւոր Հովիւներուն
Եւ Ժխական Խորհուրդներու Ատենապետներուն

Տարիներէ ի վեր Ատենի ժամագիրքի մը նոր տպագրութիւնը անհետաձգելի պահանջք մը դարձած է Ամերիկայի եւ առ հասարակ արտասահմանի Հայ Եկեղեցիներուն համար: Այս կարեւոր պահանջքը գոհացնելու նախանձախնդրութեամբ՝ Առաջնորդարանիս Ս. Վարդան Հրատարակչատունը նախաձեռնարկ եղաւ Ատենի ժամագիրքի տպագրութեան:

Այս հատորին հրատարակութիւնը կարելի եղաւ ֆինիքս, Արիզոնայէն Տիկ. Թագուհի Թամսընի նուիրատուութեամբ; ի յիշատակ իր ամուսնոյն՝ Սէթ Թամսընի:

Ատենի ժամագիրքին օրինակները կը գտնուին Առաջնորդարանին մէջ, լաթակազմ եւ թղթակազմ կողքերով:

Ձեր ապսպրանքներուն համար հաճեցէք դիմել Առաջնորդարանի գրատունը: Թղթակազմին գինն է 50.00 տոլար, իսկ լաթակազմինը՝ 60.00 տոլար:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԿՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Սեպտեմբեր 23, 1986
Նիւ Եորք, Ն.Ե.



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIocese OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԹԻՒ 611

Վիճակիս Հոգեւոր Հովիւներուն,

Ուրախութեամբ կը տեղեկացնենք որ Առաջնորդարանիս Հայ Դպրոցներու կրթական կեդրոնի նախաձեռնութեամբ լոյս տեսաւ ``Ճրագալոյց`` հատորը, որ կը բովանդակէ Ս. ծնունդի եւ Զատիկի նախօրեակի եկեղեցական արարողութեանց Սուրբ Գրական ընթերցումները: Գիրքի վերջաւորութեան տրուած է նաեւ Դանիէլի Գիրքի եղանակաւոր ընթերցումի ծայնագրութիւնը:

``Ճրագալոյց``էն օրինակ մը կը դրկուի ձեր հասցէին: Եթէ յաւելեալ օրինակներու կարիքը ունենաք՝ կրնաք դիմել Առաջնորդարանի գրատունը: Իւրաքանչիւր գիրք կ'արժէ 7.00 տոլար:

Այս առթիւ կը փափաքինք հաղորդել նաեւ որ շուտով լոյս պիտի տեսնեն հետեւեալ հրատարակութիւնները.

- Կարգ իւղաբերից
- Առձեռն ժամագիրք
- Առձեռն Շարակնոց
- Ատենի ժամագիրք

Այս գիրքերը երբ հրատարակել են պիտի տեղեկացնենք ձեզի:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Մարտ 21, 1986
Նիւ Եորք, Ն.Ե.